Խմբակի անվանումը՝ «Ազգագրություն»

Կոտայքի մարզի «Աբովյանի N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Տնօրեն՝ Ա. Տաշչյան

Խմբակի ղեկավար՝ Ա. Կարապետյան

Ծրագրի կազմող՝ Ա. Կարապետյան

Խմբակի տևողությունը՝ շաբաթական՝ 1 ժամ, տարեկան՝ 34 ժամ

1. Բացատրագիր

Տվյալ ծրագիրը նախատեսված է հանրակրթական դպրոցի 7-9-րդ դասարանների սովորողների համար: Այն նախատեսված է պատմություն սովորելու մոտիվացիա ունեցող աշակերտների հետ աշխատելու համար:

2. Ծրագրի նպատակը

- Սովորողների ինքնազարգացման խթանում
- Սովորողների ճանաչողական հմտությունների զարգացում
- Հայ ժողովրդի պատմամշակութային միջավայրի ճանաչում
- Պատկերացում տալ հայ ժողովրդի կենցաղի, ավանդույթների, մշակույթի, հավատալիքների մասին:
- Ձևավորել գիտակից վերաբերմունք հոգևոր և նյութական արժեքների ժառանգման ու պահպանման գործում:

3. Ծրագրի խնդիրները

- Կատարել հետազոտություններ:
- Տեղեկատվություն որոնել և վերլուծել:
- Ձևավորել պատմական աղբյուրներից օգտվելու կարողություններ:
- Ձևավորել պահպանողի և հարստացնողի գիտակցություն:
- Ստեղծել կապ նախնիների գեղագիտական և ստեղծագործական ավանդներին:
- Գիտելիքների միջոցով սովորողներին մոտեցնել ազգային արմատներին և ակունքներին:

4. Ծրագրի վերջնարդյունքները

- Դասընթացի արդյունքում աշակերտները ձեռք կբերեն գիտելիքներ հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի վերաբերյալ:
- Կմեծանա սովորողների մտածողության և վերլուծության կարողությունները:
- Ձեռք կբերի հոգատար վերաբերմունք պատմամշակութային ձեռքբերումների նկատմամբ:

- Գնահատի ազգային, հոգևոր-մշակութային արժեքները՝ որպես համամարդկային արժեքներ:
- Գիտակցի մշակութային արժեքները պահպանելու և հաջորդ սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը:

5. Բովանդակություն

Ծրագիրը դպրոցական ծրագրից դուրս աշակերտներին հաղորդում է գիտելիքներ հայ ժողովրդի կենցաղի և պատմամշակութային միջավայրի, նյութական և հոգևոր մշակույթի վերաբերյալ:

Թեմատիկ պլան

Հ/հ	**Թեմա**	**Ժամ**	**Մեթոդներ, տեխնիկական միջոցներ, նյութեր**
1.	Հին Հայաստանի էթնիկ պատկերը	1 ժամ	Գրքեր, պատմական աղբյուրներ
2.	Հին Հայաստանի և հայերի տնտեսամշակութային բնութագրությունը	7 ժամ	Սահիկաշար, տեղեկատվության որոնում և վերլուծություն, գրականության ուսումնասիրում
3.	Բնակավայրերն ու շենքերը հին շրջանում	1 ժամ	Հանդիպում ազգագրագետի հետ, այց Դարանի ամրոց-հնավայր
4.	Զգեստ ու զարդարանք	3 ժամ	Սահիկաշար, տարազների ուսումնասիրում, հին հայկական զարդերը և դրանց արդիական լինելը
5.	Ավանդական ուտեստ	1 ժամ	Նյութեր, գրականություն
6.	Ընտանեկան կենցաղը	1 ժամ	Ընտանիքի դերը, միջանձնային հարաբերությունները, համեմատություն ժամանակակից կենցաղի հետ
7.	Հին Հայաստանի ծեսերը	3 ժամ	Գրքեր, նյութեր, սահիկաշարեր
8.	Հին Հայաստանի տոները	2 ժամ	Միջոցառում, տոների ուսումնասիրում

9.	Ժողովրդական հավատալիքներ	1 ժամ	Հին հավատալիքների ուսումնասիրում
10.	Արհեստներ	5 ժամ	Արհեստների ուսումնասիրում՝ դարբնություն, զինագործություն, դերձակություն, արծաթագործություն
11.	Ավանդական նվագարաններ, պարեր, խաղեր	4 ժամ	Քնարական ստեղծագործություններ, ժողովրդական պարեր, ավանդական խաղեր, ստվերների թատրոն
12.	Գեղարվեստական գործվածք	2 ժամ	Գորգերի, կարպետների ուսումնասիրում
13.	Կիրառական արվեստ	1 ժամ	Նյութերի ուսումնասիրում
14.	Խաչքարագործություն	1 ժամ	Արվեստի զարգացումը սկզբնավորման ժամանակներից մինչ օրս
15.	Ամփոփում	1 ժամ	

Գրականություն

1. Ռաֆիկ Նահապետյան, Հունական և Հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին,
2. Վ. Հ. Բդոյան, Հայ Ազգագրություն,
3. Ս. Ս. Մկրտչյան, Տոներ
4. Վ. Ա. Աբրահամյան, Արհեստները և համքարական կազմակերպությունները Հայաստանում
5. http://publishing.ysu.am/hy/Rafik-Nahapetyan